«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը և Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Զորաղբյուրի մանկապարտեզ

ԴԱՍՏԻԱՐԱԿ՝ Ալվարդ Սիմոնյան

ԴԱՍԱԽՈՍ՝ Ժաննա Ավետիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը
3. Գեղագիտական դաստիարակություն, գեղեցիկ միջավայր
4. Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները
5. Կերպարվեստային գործունեության նպատակը
6. Կերպարվեստային գործունեության խնդիրները
7. Կերպարվեստային պարապմունքների պլանավորում
8. Նկարչական պարապմունքների նախապատրաստում, թեմաների ընտրություն
9. Նկարչական պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները
10. Նկարչական աշխատանքների պահպանումը
11. Նկարչության պլանավորման օրինակ
12. Եզրակացություն
13. Օգտագործված գրականություն

Ներածություն

Կերպարվեստը նախադպրոցական տարիքի երեխաների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից է: Այսօր նկարչական գործունեությունը իրականացվում է նոր մշակված չափորաշիչներով , որը հնարավորություն է տալիս կատարելագործելկերպարվեստային պարապմունքներ՝ սկսած կրտսեր խմբից մինչև ավագ խումբ:

Սաների գեղագիտական դաստիարակության միջուկը դա գեղեցիկ միջավայրն է: Այն նպաստում է սաների հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը:

Սանի գեղագիտական ընկալումը խիստ անհատական է: Դրա հիմքում ընկած է գեղեցիկի նկատմամբ հուզական արձագանքը: Սաների մեջ արթնացնում է ցանկություն ապրել գեղեցիկ միջավայրում և ստեղծագործելու: Սաների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ իրենք խաղում և ապրում են մաքուր, լուսավոր գեղեցիկ կահավորված խմբասենյակում, որտեղ հնարավորություն են տալիս խաղալ տարբեր խաղային բովանդակություն ունեցող խաղալիքներով:

Կերպարվեստային պարպմունքները սաների համար գերագույն հաճույք է զբաղվել կերպարվեստային գործունեությամբ: Կերպրվեստային պարապմունքների նպատակն է, որ սաներն ունենան դրական զգացողություններ, ինքնաարտահայտման, ինքնադրսևորման հնարավորություն: Վաղ տարիքի սաների մոտ տեղի է ունենում բուռն ճանաչողական զարգացում՝ երեխան ձեռք է բերում առարկայի ձևը զգալու և արտաքին աշխարհին փոխանցելու հմտություն: Ձևավորվում են առարկաների ձևի, գույնի, չափի վերաբերյալ առաջին զգայական կեժողմնորոշումները, զարգանում են լսելու, տեսնելու, դիտելու, վերարտադրելու ունակությունները:

Կերպարվեստային գործունեության ընթացքում սաները աստիճանաբար սովորում են գույների, գծերի միջոցով պատմել իր տեսածը և զգացածը: Պարզագույն առարկաներ և երևույթներ նկարելով՝ սանը ճանաչում է դրանք: Կերպարվեստի միջոցով սանն արտահայտում է իր սեփական երևակայությունը՝ խթանելով ստեղծագործական կարողությունները:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:

Չափորոշիչը ներառում է՝

1. ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները.
2. երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը.
3. երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը.
4. նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշները, որոնք հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.
5. նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:

Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

16. Նախադպրոցական կրթության բովանդակությունը կազմում են նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված՝ ընկալման, ըմբռնման ու յուրացման համար նախատեսված գիտելիքները, կարողությունները, հմտությունները և տարրական բարոյական արժեքային հարաբերությունները:

Կրթության բովանդակության՝ չափորոշչով սահմանված հասանելի մակարդակը ապահովվում է կրթության բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ երեխաների զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան կազմված, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված Նախադպրոցական կրթական ծրագրի համաձայն:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է: Նախադպրոցական կրթական ծրագիրը հիմք է նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական գործունեության համապատասխանության օբյեկտիվ գնահատականի համար:

Նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագիրը նախադպրոցական կրթության նպատակների իրականացմանն ուղղված, տարիքային առանձնահատկություններին համապատասխան՝ ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, կրթության կազմակերպման ձևերի, կիրառվող մեթոդաբանության, տեխնոլոգիաների ամբողջություն է, որն ապահովում է նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքները:

Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

Նախադպրոցական կրթական ծրագիրը սահմանում է յուրաքանչյուր տարիքային խմբի կրթության բովանդակության ընդհանրական կառուցվածքը, կանոնակարգային պահերը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղություններին հատկացվող շաբաթական և տարեկան պարապմունքների քանակը, սաների շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, ակնկալվող արդյունքներն ըստ զարգացման ոլորտների, գործունեության ձևերի:

Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է զարգացման հետևյալ հիմնական բնագավառներով (ուղղություններով)՝

1. խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.
2. հուզակամային և սոցիալ-անձնային զարգացում.
3. շարժողական և ֆիզիկական զարգացում.
4. աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.
5. բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական և սեռային գիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ:

Նախադպրոցական կրթական ծրագրի հիման վրա մշակվում և հաստատվում են նախադպրոցական կրթության իրականացման, այդ թվում՝ այլընտրանքային օրինակելի կրթական ծրագրեր և պլաններ՝ ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ ձեռնարկներ:

Նախադպրոցական կրթական ծրագրերին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

1. համապատասխանությունը նախադպրոցական կրթության չափորոշչին.

2. կրթության աշխարհիկ բնույթը.

3. երեխաների և մեծահասակների փոխգործունեության անհատակողմնորոշված (երեխայակենտրոն) մոտեցման ապահովումը.

4. ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը.

5. նախադպրոցական կրթության բովանդակության մեջ երեխայի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, բնագիտության հիմունքներին ծանոթացման ներառումը:

Կրթական ծրագրերը պետք է նպատակաուղղված լինեն՝

1. հետաքրքրասիրության զարգացմանը՝ որպես նախադպրոցականի ճանաչողական (իմացական) ակտիվության գործոնի.

2. երեխայի ընդունակությունների զարգացմանը.

3. ստեղծագործական երևակայության զարգացմանը.

4. հաղորդակցական հմտությունների ձևավորմանը:

Կրթական ծրագրերը պետք է ապահովեն՝

1. երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացումը, յուրաքանչյուր երեխայի հուզական բարվոքությունը.

2. երեխայի անձի, նրա ստեղծագործական ունակությունների զարգացման համար միջավայրի և պայմանների ստեղծումը.

3. համամարդկային արժեքներին, օրինականության գաղափարին հաղորդակցումը, շփումը.

4. ընտանիքի հետ համագործակցությունը՝ երեխայի լիարժեք զարգացման գործում:

29. Կրթական ծրագրերը պետք է նախատեսեն երեխայի կյանքի կազմակերպման 3 ձև՝

1. պարապմունքներ՝ որպես ուսուցման կազմակերպման հատուկ ձև.

2. խաղային գործունեության տեսակներ.

3. օրվա ընթացքում երեխայի ազատ ժամանակի տնօրինում:

Կրթական ծրագրերը պետք է ներառեն երեխաների անհատական և համատեղ գործունեության օպտիմալ համադրումը, նրանց տարիքին առանձնահատուկ

գործունեության տեսակների հաշվառմամբ: Երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը և հարաբերակցությունը փոխկապակցված են կրթության բովանդակության, երեխայի տարիքային առանձնահատկությունների և անհատական հնարավորությունների, ուսուցման ձևերի և մեթոդների, հաստատության աշխատանքային ռեժիմի հետ:

Ուսումնական և խաղային բեռնվածության հարաբերակցությունում գերակշռում է խաղայինը. ռեժիմային բոլոր պահերն ուղեկցվում են տարբեր խաղերով և խաղային մեթոդներով: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման ընթացքի գնահատումն իրականացվում է մանկավարժների կողմից շարունակական դիտարկման, փաստագրման և անհատական թղթապանակների վարման միջոցով:

Գեղագիտական դաստիարակություն, գեղեցիկ միջավայր

Կերպարվեստը նախադպրոցական տարիքի երեխաների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից է: Գեղագիտական դաստիարակությունը սկսվում է նախադպրոցական տարիքից՝ իր առջև խնդիր դնելով ակտիվացնել սաների շփումը արվեստի հետ, որի գեղեցկությունը կարող է նկատել և հասկանալ նաև նախադպրոցական տարիքի երեխան:

Այն ենթադրում է երեխայի ընկալման, երևակայության, հետաքրքրությունների, զգացմունքների, ունակությունների և հակումների զարգացում, հիշողության ձևավորում: Սանը ընկալում է աշխարհը տպավորությունների և կերպարների միջոցով: Հուզական տպավորությունները և ապրումները խոր հետք են թողնում երեխայի կյանքում և դրանք հետագայում երբեք չեն մոռացվում: Մանկության շրջանում հուզական ներդաշնակությամբ զուգորդված զգացողությունները վստահություն են ներշնչում աշխարհի հանդեպ և պահպանվում են ամբողջ կյանքում:

Գեղեցիկ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:Այն նպաստում է կրտսեր տարիքային երեխաների հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը:Երեխայի գեղագիտական ընկալումը խիստ անհատական է:Երեխաների մտածողությունը դառնում է ավելի ճկուն,նպատակային,երբ նրանք միջավայրը հարմարեցնում են իրենց գործունեության

պահանջներին.միջավայրով պայմանավորված՝ հետաքրքիր,գործնական խնդիրները սաներին դարձնում են ավելի կարող,հմուտ,հնարամիտ,գործունյա և անկախ:Այն բավարարում է երեխայի հետաքրքրությունները,ապահովում նրա անվտանգ և առողջ կենսագործունեությունը:Զբոսանքի ժամանակ երեխաները պետք է սովորեն տեսնել շրջակա միջավայրի գեղեցկությունը,դիտեն և զննեն մանկապարտեզի տարածքը,տեսնեն ներդաշնակությունը՝ծաղկանոցի,այգու,խաղահրապարակի միջև:

Գեղեցիկ միջավայրը սանի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը: Այն նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը:

Երեխայի գեղագիտական ընկալումը խիստ անհատական է: Դրա հիմքում ընկած է գեղեցիկի նկատմամբ հուզական արձագանքը: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է այն ընկալելու գեգեցիկ միջավայրում ապրելու ցանկություն և պահանջմունքի արթնացմանը: Սաներրի մտածողությունը դառնում է ավելի ճկուն, նպատակային, երբ նրանք միջավայրը հարմարեցնում են իրենց գործունեության պահանջներին միջավայրով պայմանավորված՝ հետաքրքիր, գործնական խնդիրները սաներին դարձնում են ավելի կարող, հմուտ, հնարամիտ, գործունյա և անկախ: Այն բավարարում է երեխայի հետաքրքրությունները, ապահովում նրա անվտանգ և առողջ կենսագործունեությունը:

Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

• Հարստացնել երեխայի պատկերացումներն արվեստի նկատմամբ / օգտագործել նկարազարդ գրքեր, գեղանկարչական նկարների պատճեններ, փոքր քանդակներ, դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունները և այլ /՝ որպես երեխաների ստեղծագործական գործունեության զարգացման հիմք:

• Սովորեցնել երեխաներին գնահատել հասակակիցների աշխատանքները, դրսևորել բարեհամբույր վերաբերմունք ուրիշների աշխատանքները գնահատելիս, առանձնացնել արտահայտչական միջոցները:

• Ստեղծել բարենպաստ պայմաններ երեխայի գեղագիտական ղգացողության զարգացման համար: Արթնացնել նրանց մեջ գեղեցիկի զգացողությունները շրջապատի

գեղեցիկ առարկաները, դիտումների շնորհիվ հասնել երեխաների զգայական ընկալման և դրական հույզերի զարգացմանը:

• Խթանել պատկերազարդ գրքերի նկատմամբ հետաքրքրասիրության զարգացումը: Գրքերի ընթերցումն ուղեկցել պատկերազարդ նկարների դիտումներով:

• Ծանոթացնել երեխաներին կերպարվեստային նյութերին՝ ֆլոմաստեր, գուաշ, մատիտներ: Առաջացնել դրանցով աշխատելու ձգտում, օգնել նրանց ակտիվորեն յուրացնելու կերպարվեստային նյութերի հատկությունները և կատարել այնպիսի վարժություններ, որոնք կնպաստեն ձեռքի շարժումների զարգացմանը՝ վստահ և համարձակ աշխատել թղթի վրա:

Սովորեցնել երեծաներին խնամքով վարվել թղթի, կերպարվեստային նյութերի հետ:

Կերպարվեստային գործունեության նպատակը՝

• Արթնացնել գեղեցիկի նկատմամբ հուզական վերաբերմունք:

• Զարգացնել հետաքրքրասիրություն կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ:

• Ծարունակել,զգայական ընկալման միջոցով,խթանել երեխաների դրական հույզերի զարգացումը:

• Երեխաներին սորեցնել կերպարվեստի այբուբենը՝ գծանկարի, գունանկարի, ապլիկացիայի, ծեփակերտման, դեկորատիվ-կիրառական աշխատանքի հիմունքներ:

• Ձևավորել առարկայի ձևը, գույնը տեսնելու, զգալու և վերարտադրելու կարողություն

• Երեխաներին մերձեցնել արվեստին՝ նրանց փոխանցելով գեղագիտական տարրական գիտելիքներ և գործնական հմտություններ

Կրտսեր խմբում կերպարվեստային գործունեության ընթացքում տեղի է ունենում բուռն ճանաչողական զարգացում `երեխան ձեռք է բերում առարկայի ձևը զգալու և այն արտաքին աշխարհին փոդանցելու հմտություն:Ձևավորվում են առարկաների ձևի,գույնի,չափի,վերաբերյալ առաջին զգայական կողմնորոշումները ,զարգանում է լսելու,դիտելու,վերլուծելու ունակությունները:Ձևավորվում են պատկերացումներ այ մասին,որ մատիտով,վրձինով,յուղամատիտով նկարում են ,իսկ ծեփանյութով՝ ծծեփում: Այս տարիքային խմբում երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել թղթի վրա մատիտով,վրձինով ստացվող գծերի,ուրվագծերի,գույների,պատկերների վրա:Անհրաժեշտ է երեխաներն առաջարկել պատմել այն մասին,թե ի՞նչ են իրենք նկարել,և ինչի՞ է այն

նման:Պարզագույն առարկաներ և երևույթներ նկարելով՝ երեխան ճանաչում է դրանք,և նրա մեջ ձևավորվում են առաջին պատկերացումները արվեստին ոլորտում:Անհրաժեշտ է,որ երեխան կարողանա տեսնել իրականի և նկարածի միջև նմանություններ և տարբերություններ:Սկզբում նա պետք է աշխատի տաք գույներով:Դա օգնում է նրան ուշադիր լինի շրջապատում գնվող վառ,պայծառ գույներով առարկաների նկատմամբ: Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխան աստիճանաբար սովորում է գույների,գծերի լեզվով պատմել իր տեսածի,զգացածի մասին, ինչպես նաև զարմանք արտահայտել շրջապատի երևույթների վերաբերյալ:Կերպարվեստային գործունեությունը լավ տրամադրության սկզբնաղբույր է,ուստի անհրաժեշետ է խթանել և զարգացնել հետաքրքրասիրությունը ստեղծագործական աշխատանքի նկատմամբ:Երեխան թղթի վրա արտահայտում է ոչ մ իայն այն,ինչ տեսնում է շրջապատում,այլև դրրսևորում է սեփական երևակայությունը,խթանելով ստեղծագործական կարողությունների զարգացումը:

Կերպարվեստային գործունեության խնդիրները

- Ծանոթացնել կերպարվեստային նյութերին ,ձևավորել մատիտով, վրձինով, գուաշով, ջրաներկով և ծեփանյութերով աշխատել նախնական հմ տություններ:
- Զարգացնել պարզ առարկաներ պատկերելու կարողություններ:
- Սովորեցնել նկարելով,ծեփելով բացահայտել առարկաների հարաբերությունները:
- Ձևավորել կերպարային պատկերացումներ,շոշափելու միջոցով զարգացնել ուշադրությունը,դիտողականությունը,պատկերաումներ առարկաներին բնորոշ հատկությունների ՝ ձևի,չափի,գույնի նկատմամբ:

Կրտսեր խմբում անհրաժեշտ է զարգացնել երեխաների հետաքրքրասիրությունը և ուշադրությունը կերպարվեստային նյութերի նկատմամբ:Անհրաժեշտ է երեխային հնարավորություն տալ՝ տարբեր ուղղություններով թղթի վրա հետագծեր առաջացնելու: Սկզբնական շրջանում այդ գործողությունները կարող են արտահայտվել անհամաձայնեցված շարժումների միջոցով, սակայն աստիճանաբար երեխայիյ ձեռքն այդ ամենը կկատարի ավելի վստահ և կոկիկ: Նկարչական գործունեության ընթացքում երեխաները պետք է սովորեն համեմատել առարկաներն ըստ մեկ հատկանիշի, գտնեն երկու առարկաների կամ երևույթների նմանությունը:

Այս տարիքային խմբի կերպարվեստային ծրագրերի առաջնային նպատակներից է՝ տեխնիկայի ուսուցումը.մատիտը բռնել 3 մատով,կատարել տարբեր վարժություններ ՝ կետեր,գծեր,շրջանակներ,աղեղներ,մեծ և փոքր գույնավոր օղակներ:Նկարչական տեխնիկայի խնդիրներից է ՝ վրձնին ծանոթացումը.երեխաները սովորում են վրձինը ճիշտ բռնել և կատարել վարժություններ ՝ վրձնահարվածներ,վրձնահպումներ,մեկ գույնի օգտագործմամբ պատկերել պարզ առարկաներ ,ճանաչել և տարբերել հիմնական գույները,որոշ բաղադրիչ գույներ,կատարել վարժություններ երկու հակադիր գույների զուգակցմամբ:Այս տարիքային խմբում երեխայի շարժումները սահմանափակ են:Այդ առումով ՝ խնդիր է առաջանում հետևյալ երեխայի ճիշտ նսելու և բնականոն կեցվածքի պահպանման գործընթացին:

Կրտսեր խմբում կերպարվեստային պարապմունքների ընթացքում ծրագրային նյութին տրամադրվում է ավելի քիչ տեղ, իսկ նյութի ամրապնդմանը, կարողությունների և հմտությունների ևևավորմանը՝ ավելի շատ:

Պարապմունքներն ըստ տեսակի այս տարիքային խմբում շաբատվա ընթացքում բաշխվում են հետևյալ կարգով.

- Նկարչություն-1 անգամ
- Ծեփ-0,5 անգամ
- Կառուցողական աշխատանք-0,5 անգամ:

Ծեփը և կառուցողական աշխատանքնվ անցկացվում են հետևյալ հերթագայմամբ ՝ մի շաբաթ ծեփ,մի շաբաթ ՝ կառուցողական:Ամսվա կտրվածքով կազմակերպում ենք 4 նկարչության ,2 ծեփի, 2 կառուցողական պարապմունքներ՝ 10-15 րոպե տևողությամբ: Ապլիկացիայի պարապմունքներ այս տարքային խմբում չենք կազմակերպում,սակայն դրա տարրերն օգտագործվում են խավատախտակի վրա աշխատանքի ժամանակ.երկրաչափական պատկերների միջոցով կառուցվում են այս կամ այն պատկերները:

Կերպարվեստային պարապմունքների պլանավորում

Պարապմունքներին նախապատրաստվելը սկսվում է պլնավորումից: Ընտրելով ծրագրային նյութը և որոշելով թեման՝ դաստիարակը ուսուցման մեթոդների, և հնարների

ճիշտ ընտրությամբ կապահովի նյութի առավելագույն ընկալումը: Պլանավորման ընթացքում որոշվում է ,թե ինչ նախապատրաստակ աշխատանք է հարկավոր կազմակերպել՝ դիտում,զրույց,պատմվածքի ընթերցում,ծանոթացում նոր խաղալիքին և այլն:Մեկ օր առաջ դաստիարակը նախապատրաստում է պարապմունքի համար անհրաժեշտ նյութերը/նկարչական թղթի հակառակ կողմում գրվում է երեխայի անունը,ամսաթիվը/,անուններով թղթիկներ է նախապատրաստում նաև ծեփի համար:Անհրաժեշտության դեպքում երանգավորում է թուղթը:Կտրվում են թեմային համապատասխան երկրաչափական պատկերներ,սրվում են ջարդված մատիտները,պատրաստվում է աղի խմոր:Որոշ նյութեր պատրասվում են հենց նույն օրը՝ ջրով բացվում է ջրաներկը կամ գուաշը:Ծեփակերտման և կառուցողական աշխատանքների անվանաթղթերը/փոքրիկ զոլակներ/դաստիարակը բաժանում է պարապմունքի վերջում:

Երեխաների պատկերացումներն այս կամ այն առարկայի վերաբերյալ ճշտելու նպատակով կազմակերպվում են զբոսանքներ,էքսկուրսիաներ,դիտակտիկ խաղեր,որոնց ընթացքում ծանոթացնում են առարկների ձևերին,չափերին,գույներին:

Նկարչական պարապմունքների նախապատրաստում թեմաների ընտրություն

Պարապմունքներից առաջ դաստիարակը նախապատրաստում է աշխատանքային սեղանը:Այնտեղ պետք է դրված լինեն միայն ամենաանհրաժեշտ պարագաները՝ նկարչական թուղթ/սպիակ կամ երանգավորված/,ըստ երեխաների քանակի՝մեկական մատիտ կամ յուղամատիտ:Ջրաներկի կամ գուաշի պարագայում նախապես անհրաժեշտ գույնի ներկը բացել մածուկի խտությամբ:Սեղաներին պետք է դնել լաթ:

Սկզբնական շրջանում, երբ երեխաները դեռ չեն կարող ճիշտ օգտվել նկարևական պարագաներից, դաստիարակը մատիտներ և յուղամատիտներ է տալիս երեխաներին՝ միայն նկարելուց առաջ, հետո այն պահում է երեխաների համար անհասանելի տեղում:

Կերպարվեստային պարապմունքների թեմաները ընտրում է դաստիարակը,հաշվի առնելով ծրագրային պահանջները,ուսոցանվող տեխնիկայի բովանդակությունը և

երեխաների կենսափորձը:2-3 տարեկան երեխաների նկարչական գործունեությունը կոնկրետ է առարկայական ` նրանք նկարում են իրենց շրջապատում գտնվող ծանոթ առարկաները,բնության երևույթները:Առարկայական նկարչություն իրականացնելիս անհրաժեշտ է այն նախապես ուսումնասիրել,շոշափել:Դաստիարակի օգնությամբ երեխաները պետք է նշեն դրա բնորոշ հատկանիշները՝ գույնը,ձևը, չափը:Երեխայի մոտ ձևավորվում է հստակ պատկերացում տվյալ առարկայի մասին,հստակեցվում է դրա տեղը տարածության մեջ: Զբոսանքների ընթացքում դաստիարակը երեխաներին առաջարկում է դիտել, թե ինչպես են ամպից կաթում անձրևի կաթիլները, ինչպես է խոտը աճում ճանապարհի եզրին և այլն:

Նկարչական պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները

Կրտսեր խմբում կերպարվեստային պարապմունքները կազմակերպվում են եթախմբերով:Նման աշխատանքի ոճը թույլ է տալիս իրականացնել անհատական աշխատանք.մի քանի հոգիանոց եթախմբի անդամներին դաստիարակը հեշտությամբ է սովորեցնում ճիշտ օգտվել կերպարվեստային նյութերից:Դաստիարակը նստում է երեխաների հետ նույն սեղանի շուրջ,փոքրիկ աթոռի վրա,որպեսզի տեսանելի լինի բոլորի կողմից:Այս տարիքային խմբում բոլոր պարապմուքներն անցնում են խաղի ձևով: Պարապմունքների խթանման փուլը կազմակերպվում է ոտանավորների,հանելուկների կամ փոքրիկ պատմվածքի ներկայացմամբ՝ ստեղծելով խաղային իրավիճակ:

Նկարչական աշխատանքների պահպանումը

Երեխաների աշխատանքների պահպանումը առանձին թղթապանակներով արդյունավետ է այն առումով,որ հնարավոր է դառնում հետևել յուրաքանչյուր երեխայի նկարչական կարողությունների զարգացմանը:Յուրաքանչյուր պարապմունքի վերջում կազմակերպվում է աշխատանքների դիտում և քննարկում:Այդ ընթացքում կարևոր է խրախուսել ,նշել երեխաների ձեռքբերումը:

Սնորև ներկայացնում ենք **նկարչության պլանավորման օրինակ**:

Տեսակը՝ առարկայական նկարչություն

Թեմա՝ գունավոր թելերի կծիկներ

Նպատակը՝ սովորեցնել երեխաներին գունավոր մատիտներով թղթի վրա չընդհատված գծերի միջոցով կատարել շրջանաձև շարժումներ և ստանալ թելի կծիկ առանց մատիտը թղթի վրայից վերցնելու: Կարողանա ճիշտ բռնել մատիտը, մյուս ձեռքը խնամքով դնել թղթի վրա: Զարգացնել գունազգացողությունը: Կարողանան հաճույք ստանալ սեփական աշխատանքից:

Անհրաժեշտ պարագաներ՝ գունավոր մատիտներ 2/3/ գույնի, տարբեր գույնի թելի կծիկներ, թղթեր յուրաքանչյու երեխայի համար, խաղալիք փիսիկ կամ նկար:

Պարապմունքի անցկացման մեթոդիկան

Գրավելով երեխաների ուշադրությունը՝ ասել, որ այսօր իրենց հյուր է եկել փիսիկը:

-Մեր փիսիկը շատ է սիրում խաղալ գնդակով, թելի կծիկներով: Սակայն տատիկն արգելում է նրան մոտենալ դրանց: Քանի որ փիսիկն այսօր մեզ հյուր է, մենք նրան անակնկալ կմատուցենք: Ես ինձ հետ բերել եմ գույնզգույն թելերի կծիկներ՝ դեղի, կարմիր, կապույտ: Մենք կփորձենք նկարել գունավոր այդպիսի շատ կծիկներ և նվիրել փիսիկին: Իսկ ողջ պարապմունքի ընթացքում նա կհետևի, թե ինչպես եք դուք աշխատում:

Առաջարկվում է աշխատել գունավոր մատիտներով և ընթացքում օգնել դժվարացող երեխաներին:

Քննարկման ժամանակ խրախուսվում են բոլորը: Ասել, որ փիսիկն իրենցից շատ գոհ մնաց / - Նա հիմա շատ ուրախ է, որովհետև արդեն ունի գեղեցիկ, գույնզգույն թելերի կծիկներ /:

Կապը այլ պարապմունքների և գործունեության այլ ձևերի հետ

Օրվա տարբեր ժամերին երեխաներին ծանոթացնել կլոր ձև ունեցող, տարբեր գույների առարկաներին, դրանց հետ կազմակերպել խաղեր և զվարճալիքներ: Զրուցել նաև այն մասին, թե ինչ կարելի է գործել թելերով / գլխարկ, ձեռնոցներ, շարֆ և այլն /, հարցնել ում տատիկն է կարողանում գործել:

Տրամադրել գունավոր թելեր և երեխաներին առաջարկել ստանալ կծիկներ:



Ամփոփում

Երեխաները կարողացան նկարել և գունավոր թելերից ստանալ գունավոր կծիկներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կերպարվեստը այն բացառիկ գիտությունների շարքին է դասվում, որոնք կապ ունեն բոլոր ոլորտի գիտությունների հետ:

Կերպարվեստը կապ ունի հոգեբանության, երաժշտության, փիլիսոփայության, երկրաչափության հետ:

Երկար տարիներ աշխատելով մանկապարտեզում՝ եկա այն եզրակացության, որ կերպարվեստային պարապմունքները կարևոր դեր ունեն երեխայի կյանքում: Այն զարգացնում է նրանց աշխարհընկալումը, ճանաչողական հետաքրքրությունները, ստեղծագործելու կարողություններ և հնարամտությունները: Ամենօրյա պարապմունքների ժամանակ ես ականատես եմ լինում, թե ինչպես են սաները առանձնակի ոգևորությոմբ մասնակցում պարապմունքներին:

Մասնագետը պետք է գաղափար կազմի կերպարվեստի դասավանդման մեթոդիկային, ինչպես նաև ընդհանուր մեթոդների մասին: Առարկայի դասավանդման հիմնական նպատակն է բացահայտել մեթոդական այն հարցերը, որոնք անհրաժեշտ են երեխայի կերպարվեստային գործունեության զարգացման համար:

Երեխայի կերպարվեստային կրթությունը պետք է ուղղել նրա ստեղծագործական, պատկերային արվեստի զարգացման,շրջակա միջավայրի իրականության տպավորությունների արտահայտման,արվեստի և գրականության վրա:

ՕՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր
2. Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի / 3-4 / տարեկանների կրթական համալիր ծրագիր
3. Նախաշավիղներ
4. Կերպարվեստի պարապմունքներ / ուսումնական ձեռնարկ/ -Լ. Սմբատյան, Լ. Վերդյան, Լ. Սարգսյան
5. Մեթոդական ձեռնարկ – Լ. Սմբատյան և ուրիշներ
6. Համացանց